«ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա — Սովորողների ինքնուրույնություն, նախաձեռնություն եվ ստեղծագործական ունակությունների զարգացումը կերպարվեստի դասերի ընթացքում

Հեղինակ — Մարինե Եղիկյան

Ղեկավարներ — Ալիսա Թալալյան, Անի Օդաջյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԵՐԻՆ..4

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....6

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ 8

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՄՆԻԿ 12

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը, ինչպես նաև նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները: Ինքնուրույն աշխատանքը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները դիտարկվում են որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ստեղծագործական ունակությունների նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԵՐԻՆ

Սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման հարցը կենտրոնական է, ըստ Կ.Դ.ՈՒշինսկու, ով գրել է, որ երեխաները պետք է "Եթե հնարավոր է ինքնուրույն աշխատեն, իսկ ուսուցիչը պետք է ղեկավարի այս անկախ աշխատանքը և նյութ տրամադրի նրան": Նա հիմնավորեց դասարանում սովորողների ինքնուրույն աշխատջանքի կազմակերպման որոշ ուղիներ ու միջոցներ՝ հաշվի առնելով ուսուցման տարիքային շրջանները:

Դպրոցը պետք է ուրախություն պարգևի սովորողին: Դա պայմանավորված է ոչ միայն երեխաների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքով, այն նաև հաջողակ կրթական գործունեության նկատմամբ հոգատարությամբ: ՈՒսուցչի խնդիրն է "բացել երեխայի սիրտը", արթնացնել նրա ցանկությունը սովորելու հանդեպ : Դրա համար ուսուցիչը պետք է լավ իմանա երեխաների հոգեբանական առանձնահատկությունները , կարողանա հասկանալ յորրաքանչյուր երեխայի անհատականությունը և գտնել ուսուցման և ճանաչողական մոտիվացիայի ձևավորման համապատասխան մեթոդներ, ինչպես նաև կազմակերպել սովորողների ինքնուրույն աշխատանքը: Տարրական դպրոցական տարիքում անհատականության ձևավորման գործում առաջատար դեր է խաղում կրթական գործունեությունը: Որպես երեխայի և մեծահասակների միջև համագործակցության ձև , կրթական գործունեությունը երիտասարդ սերունդներին սոցիալական հարաբերությունների համակարգում ընդգրկելու հիմնական միջոցներից է :

Կրթական գործունեության էությունը կայանում է կրթական խնդիրների լուծման մեջ, որոնց հիմնական տարբերությունն այն է, որ նրանց նպատակն ու արդյունքները հենց գործող սուբյեկտի փոփոխությունն է, որը բաղկացած է գործողության որոշակի մեթոդների յուրացումից , այլ ոչ թե օբյեկտների փոփոխումից, որի հետ գործում է սուբյեկտը: ՈՒսուցման գործընթացում մեծ նշանակություն ունի սովորողների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորումը:

Մանկավարժական գործընթացում զգալի տեղ են գրավում ինքնուրույն աշխատանքի մեթոդները, ինչը բազմիցս ընդգծել են անցյալի հայտնի ուսուցիչները: Կ.Դ.ՈՒշինսկին պնդում է , որ միայն ինքնուրույն աշխատանքն կարող է պայմաններ ստեղծել սովորողների

մտածողության խորը տիրապետման և զարգացման համար, իսկ Պ.Ֆ.Կապտերևն ասել է , որ դպրոցը բարելավելու յուրաքանչյուր նոր քայլ ինքնակրթության սկզբունքների կիրառումն է երեխաների դպրոցական կրթության մեջ:

Ուսումնական գործունեությունը բովանդակությամբ բարդ է և դպրոցականների համար միանգամից չր ձևավորվում և նույնը չէ: Սկզբում մեծ ջանք է պահանջվում , որպեսզի ուսուցչի ղեկավարությամբ համակարգված աշխատանքի ընթացքում աշակերտը ներգրավվի ուսման մեջ: Այս գործընթացի բարդությունը վկայում է այն փաստը , որ նույնիսկ կրթական գործունեության հատուկ կազմակերպված պայմաններում, այն ոչ բոլոր երեխաների մոտ է զարգանում: Ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման խնդիրը դեռևս արդիական է:Ժամանակակից աշխարհի պայմաններում այն ավելի քան երբևէ ակտուալ է, քանի որ ներառում է դպրոցականների ոչ միայն անձնայիրն զարգացման և նրանց անկախության ձևավորման, այլև մատաղ սերնդի ստեղծագործական դաստիարակության խնդիրները:Մեր նպատակն է վերլուծել կրթական գործունեության հետ կապված խնդիրները , որոշել սովորողների ինքնուրույն աշխատանքի տեղն ու նշանակությունը այս գործընթացում և դիտարկել ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման գործընթացը:

Անձի հոգևոր զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման գործում չափազանց գերակա տեղ է գրավում հայ մշակույթը , որը հարուստ է ավանդույթներով; Դրանք մեզ են հասել ծեսերի, հեքիաթների ու էպոսի, երգ ու պարի, խաղերի միջոցով:

Դրանք ազգային հոգևոր արժեքների, սոցիալական կենսափորձի պահպանման, սերնդեսերունդ փոխանցման միջոց է :

Կրթության բարեփոխումների ներկա փուլում շատ կարևոր է սովորողների մեջ ինչպես ինքնուրույն նախաձեռնություն,այնպես նաև ստեղծագործական ունակություններ զարգացնել: Անկասկած, կրթական գործընթացը պետք է ուղղված լինի դպրոցականների, շփվելով գեղարվեստական կրթության անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, որը համարվում է ոչ միայն ժամանակակից անհատի աշխարհաճանաչողության և գեղարվեստական փորձի ընդլայնման գործոն , այլև հոգևոր-բարոյական զարգացման միջոց : Արվեստի ստեղծագործություններն ընդունելով որպես կյանքի ու մարդկային հարաբերությունների գեղարվեստական արտացոլման հիմնական տեսակներ՝ ընդգծում ենք , որ անհատը շփվելով արվեստի հետ , եզակի հնարավորություն է ստանում այն ընկալել ու ընդունել որպես հոգևոր հարստացման գործոն :

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կա բավականաչափ տեսական հիմք կերպարվեստի դասերին դպրոցականների ստեղծագործական զարգացման գործընթացը արդյունավետ դարձնելու համար: Միևնույն ժամանակ մեր ուսումնասիրությունները և մեր բազմամյա մանկավարժական փորձը ցույց են տալիս , որ այսօր մեր կրթական հաստատություններում ՝ հատկապես հանրակրթական դպրոցներում , սովորողների հոգևոր զարգացումն ու գեղարվեստական դաստիարակությունը գործնականում անբավարար է իրականացվում:

Կերպարվեստի ազդեցության շնորհիվ անձի ստեղծագործական զարգացման խնդրի լուծման արդիականությունը պայմանավորված է ոչ միայն մեթոդիկայի մշակմամբ, այլև գործնական նշանակությամբ: Այն պայմանավորված է նաև դպրոցականի անձի հոգևոր կերպարին առաջադրվող հասարակական-մշակութային պահանջներով, որտեղից էլ ձևավորվել է մեր թեմայի ընտրությունը՝ “Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգաց ումը կերպարվեստ առարկայի դասավանդման ընթացքում” խորագրով:

Սովորողի մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունն եր զարգացնելու համար , կարևոր է կազմակերպել սովորողի հոգևոր զարգացման

տեսական և գործնական կողմերը:Այսօր աճող սերնդի գեղարվեստական դաստիարակությա
ն գործն ընթանում է տարբեր հանգամանքների
ազդեցության ներքո՝ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցի
ալական և այլն:Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ ՝
ժամանակակից մանկավարժության համար խնդիր
է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատ
մության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:Կրելով վերոնշյալ
և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը
՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին
և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:Ընդ
որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ
վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբեր մունք սեփական անձի նկատմամբ և հարաբերություն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի տեղեկատվական տե խնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա որոշոկի տիպարների միջոցով, որոնք դրսևվորվում են այդ " տեղեկատվական աղբյուրներից հոսող " հերոսների վարքագծում :Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: ՈՒսուցման գեղարվեստական դաստիարակության ներգործությունը շատ կարևոր դեր է կատարում աշակերտների ստեղծագործական զարգացման գործընթացում: ՈՒսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական , դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ:Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խ նդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում , գիտելիքների ու կարողությունների , արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Կերպարվեստ առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն կարող ենք առանձնացնել նրանցից մեկը՝ գեղագիտական դաստիարակությունը: Ներկայումս երեխաների գեղագիտական դաստիարակությունը դարձել է մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոցներից մեկը:

Գեղեցկության հանդեպ ընկալունակ մարդուն դաստիարակելը խնդիր է, որում գեղագիտության խնդիրները՝ արվեստի գիտությունը և էթիկայի խնդիրները, կապված են միմյանց հետ: Իսկ դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործընթացում առանձնահատուկ դերակատարում ունի կերպարվեստի ուսուցիչը: Հենց նրան են կոչված

երեխայի ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների ձևավորման զարգացման հիմքերը դնելը:

Արվեստը մեզ և մեր երեխաներին սովորեցնում է տեսնել և զգալ ավելի խորը և ավելի նուրբ: Արվեստի հրաշագործ ուժն այն է, որ այն ազդում է զգացմունքների վրա՝ դրանց միջոցով ճանապարհ հարթելով դեպի բանականություն, հասկացողություն և եզրակացություններ: Մեր խնդիրն է երեխաների մոջ դաստիարակել զգացմունքներ, զարգացնել գեղեցիկը ընկալելու բնությանն կողմմից մարդուն տրված թանկարժեք կարողությունը: Բայց գեղագիտական դաստիարակության երկրորդ խնդիրը երիտասարդ սերնդի մոտ գեղեցկությունն ընկալելու կարողության զարգացումն է: Երեխաների մոտ գեղագիտական դաստիարակության հակումները դրսևորվում են վաղ շրջանում: Որպես վառ օրինակ են ծառայում երեխաների ստեղծագործական ցուցահանդեսները:

Վ. Ա. Սուխոմլինսկին գրել է, որ “երեխան իր էությամբ հետաքրքրասեր հետախույզ է, աշխարհը հայտնագործող”: Երեխան ինքն իր առջև բացվում է կենդանի գույներով, վառ ու աշխույժ հնչյուններով, սեփական ստեղծագործության մեջ, սիրտը ներշնչող գեղեցկության մեջ, հեքիաթի, ֆանտազիայի, խաղի միջոցով: Այս է ճիշտ ճանապարհը, որը տանում է դեպի երեխայի սիրտ:

Երեխայի ծանոթությունը գեղեցկության աշխարհին բացում է նրա առջև շրջապատող կյանքի հարստությունն ու գեղեցկությունը: Գեղեցկությունն ընկալելու ունակությունը բնության մեծ նվերն է մեզ: Կարծում եմ, որ կերպարվեստի դասերն օգնում են երեխայի մեջ սեր ձևավորել արվեստի և ստեղծագործության հանդեպ: Դաստիարակության արդյունավետ միջոցներից մեկը ստեղծագործական ունակությունների զարգացումն է, որը սերտորեն կապված է կերպարվեստ առարկայի հետ:

Կերպարվեստի դասերին ես երեխաներին սովորեցնում եմ տեսնել և ընկալել գեղեցիկը, փորձում եմ երեխանելի մեջ սերմանել հետաքրքրություն և սեր ինքնուրույն ստեղծելու և ստեղծագործելու նկատմամբ: Այս ամենին հասնելու համար շատ կարևոր է, որ կերպարվեստի դասերին երեխաներն ունենան ամեն ինչ և դասերն անցկացնեն կերպարվեստի համար նախատեսված առանձին դասասենյակում՝ հագեցած անհրաժեշտ պարագաներով և կահավորանքով:

Աշխատանքի ընթացքում երեխան պետք է անմիջապես ներդաշնակվի ստեղծագործական գործունեությանը: Գույնը հուզականորեն ազդում է երեխայի վրա՝ գերելով նրան իր փայլով ու պայծառությամբ: Ուստի կարևոր է նպատակաուղղված կերպով զարգացնել գույնի զգացողությունը՝ որպես շրջակա աշխարհի գեղեցկության և արվեստի գործերի առավել մատչելի ներկայացում:

Կերպարվեստի դասերին ես երեխաներին բացատրում եմ, թե ինչու է անհրաժեշտ կիրառել այս կամ այն գույնը, ինչ համակցություններ են հարմար դրա համար, որպեսզի առավել առտահայտիչ լինի ստեղծագործությունը: Կարծում եմ, որ հնչեղությամբ մոտ հնչերանգներից կազմված ներդաշնակ համադրություններն օգնում են ավելի լավ փոխանցել բնության երևույթները, հորինել կոմպոզիցիաներ:

Գեղագիտական դաստիարակության խնդիրը մշտապես հետաքրքրել է դաստիարակներին, մանկավարժներին, հոգեբաններին. խոր գեղագիտական զգացումները, արվեստում և

շրջապատող իրականության մեջ գեղեցիկը տեսնելու կարողությունը չափազանց կարևոր դեր ունեն մարդու հոգևոր կյանքում: Այստեղից էլ կրտսեր դպրոցի յուրաքանչյուր ուսուցչի առաջին կարևոր խնդիրներից մեկը դառնում է երեխայի մեջ գեղագիտական ընկալունակության և դիտողականության ձևավորումը, ինչը հնարավորությունէ ընձեռում երեխային՝ տեսնելու, դիտելու, ճանաչելու և ըմբռնելու իրականության գեղագիտական ուղղվածությունը:

Գեղեցիկի զգացողությունը երեխաների մեջ ի հայտ է գալիս դեռևս վաղ մանկության տարիներին, երբ նրանք սկսում են ճանաչել շրջապատի իրերը, առարկաներն ու խաղալիքները: Նրանք աշխուժորեն արձագանքում են գույների գեղեցիկ ներդաշնակությանը, ձգտում ցայտուն, պայծառ ու շքեղ գուներանգներին:

Դպրոցում գեղագիտական դաստիարակություն իրագործվումէ ինչպես դասերի ընթաքում, այնպես էլ դասերից դուրս՝ արտադասարանական աշխատանքների կազմակերպման ժամանակ: Հաշվի առնելով դպրոցականների տարիքային և ճանաչողական հնարավորությունները՝ դպրոցի ուսուցիչը պետք է որոնի գեղագիտական դաստիարակության իրականացման այնպիսի ուղիներ և ձևեր որոնք օգնեն երեխային ճիշտ ընկալելու գեղեցիկը արվեստում, աշխատանքում, բնության մեջ և ամենօրյա կյանքում:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՍՆԻԿ

Դպրոցականների գեղագիտական ընկալման ձևավորումն ու զարգացումը պահանջում է դաստիարակության տարբեր գործոնների և միջոցների համակցված կիրառում: Անդրադառնանք դրանցից մեկին՝ բնության դերին, որպես մարդու գեղագիտական դաստիարակության կարևոր գործոնի: Իզուր չի ասված, որ բնությունը մարդու գեղագիտական ճաշակի մեծագույն դաստիարակն է: Ռուս մեծ կոմպոզիտոր Չայկովսկին, բարձր գնահատելով արվեստի դերը մարդու

կյանքում, այնուամենայնիվ, նախապատվությունը տվել է բնությանը: Նա գրել է. « Բնությունից ստացած զմայլանքն ավելի բարձր է, քան արվեստից ստացածը»:

Մարդը բնության մի մասնիկնէ, և այստեղից է սկսվում նրա աշխարհը: ԲՆության հետ անմիջական շփմամբ ձևավորվում է ստեղծագործ մարդու կերպարը: Ուստի մերօրյա ուսուցիչն իր դասերը պետք է կառուցի այնպես որ կարողանա սաների մեջ արմատավորել համամարդկային այնպիսի արժեքներ, որ նրանք նայեն դեպի բարին, ազնիվն ու գեղեցիկը, օգտակարն ու արդյունավետը, անհրաժեշտն ու կարևորը: Այս առումով կարևորում ենք էքսկուրսիաների և զբոսանքների դերը, որոնք ոչ միայն նպաստում են աշակերտների մտավոր

զարգացմանը, այլև հարստացնում են նրանց ճանաչողական գործունեության սեփական փորձի երևակայությունը, մարզում միտքը՝ արթնացնելով հույզեր և հաճելի զգացումներ: Այդ կերպ ձևավորվում է գեղագիտական վերաբերմունք բնության և շրջակա աշխարհի հանդեպ: Լինելով բնության գրկում աշակերտը ձգտում է ինքնուրույն ուսումնասիրել տարբեր երևույթներ՝ իրեն զգա լո որպես բնական աշխարհը պեղող փոքրիկ «փորձագետ»:

Նա փորձում է որոնել և գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները, դժվարանալու դեպքում դիմում է ընկերներին և առաջնորդվում ուսուցչի խորհուրդներով: Երեխայի մեջ ծնվում են բնապահպանական և հայրենասիրական մղումներ որոնք նրա մեջ ցանկություն են առաջացնում տարբեր գործողությունների իրականացման, օրինակ՝ մասնակցել ծառատնկման, իրականացնել շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ, օգնել թևավոր բարեկամներին, խնամել սենյակային բույսեր, աշխատել դպրոցամերձ հողամասում, ձևավորել պաստառներ բնապահպանական թեմաներով և այլն: Անշուշտ, բնությունը կենդանի դպրոց է որտեղ աշակերտը գեղեցիկի հայտնագործումն իրականացնում է դիտելով, ունկնդրելով, շոշափելով և զննելով: Այս ամենի արդյունքում զարգանում են դպրոցականի ստեղծագործելու, ինքնուրույն և խմբային գործունեություն կարողությունները:

Դպրոցում ուսուցումը պիտի նպաստի անձի համկողմանի զարգացմանն ու դաստիարակությանը: Հանրակրթական պետական չափորոշիչների «Արժեքային համակարգ»

բաղադրիչում սովորողների գեղագիտական դաստիարակությանն ուղված պահանջներն են.

Ձևավորել անձ և քաղաքացի, որը՝

- Կարևորի բնության գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը բարին ու ճշմարիտը,
- Գնահատի, սիրի նև հոգատարություն ցուցաբերի բնության նկատմամբ, լինի գեղագիտական ընկալող,
- Մշտապես հոգ տանի բնության նկատմամբ,
- Լինի գթասիրտ, օրինապահ, արդարամիտ և բարեկիրթ:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ա

անկավարժական գիտության մեջ մարդու կողմից գիտելիքների, կարողությունների և հմտությունների մեջ պարփակված կենսափորձի ձեռքբերման գործընթացը որոշվում է մի քանի հասկացություններով: Սրանք ուսուցման գործունեություն, ուսուցում, ուսուցում և ուսուցում են: Կրթական գործունեությունը գործընթաց է, որի արդյունքում մարդը ձեռք է բերում կամ փոխում իր առկա գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, կատարելագործում և զարգացնում դրանք: Նման գործունեությունը թույլ է տալիս նրան հարմարվել շրջապատող աշխարհին, կողմնորոշվել դրանում, ավելի հաջող և լիարժեք բավարարել իր հիմնական կարիքները, ներառել ինտելեկտուալ աճի և անձնական զարգացման կարիքները: Հայեցակարգը բավականին բարդ է և բազմակողմանի: Այն ենթադրում է սովորողի և ուսուցչի համատեղ կրթական գործունեությունը և բնութագրում է գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցման և յուրացման գործընթացը:

Ժամանակակից իմաստով ուսուցման գործընթացին բնորոշ է երկկողմանի բնույթը, ուսուցիչների և աշակերտների համատեղ գործունեությունը՝ ուսուցչի առաջատար դերով, հատուկ պլանավորված կազմակերպվածությամբ և կառավարմամբ, ամբողջականությամբ և միասնականությամբ տարիքային զարգացման օրենքներին համապատասխան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի թեմա, որը մեծ նշանակություն ունի աշակերտի զարգացման և կրթության գործընթացում: Շատ կարևոր են կերպարվեստի դասերի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա գեղագիտական դաստիարակություն, իսկ այն իրագործելու համար հարկավոր են պայմաններ՝ գեղեցիկ, կահավորված և տեխնիկապես հագեցած կերպարվեստի դասասենյակներ: Ես կարծում եմ, որ այս ամենը հարկավոր է սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ զարգացնելու համար, քանի որ այսօրվա աշակերտը արժանի է սովորել վերոնշյալ պայմաններում: Մենք պարտավո՛ր ենք դաստիարակել այնպիսի սերունդը, որը վաղը կդառնա մեր պետության արժանապատիվ քաղաքացին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://editprint.am/students-data/%D4%BC%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B1%D5%BC%D5%A1%D6%84%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6.pdf
2. https://goris3.schoolsite.am//wp-content/uploads/sites/217/2018/03/%d4%ba%d5%a1%d5%bd%d5%b4%d5%a5%d5%b6%d5%a1-%d4%bd%d5%b8%d6%82%d6%80%d5%b7%d5%b8%d6%82%d5%a4%d5%b5%d5%a1%d5%b6.-%d4%b2%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d5%b8%d6%80%d5%ba%d5%a5%d5%bd-%d5%a3%d5%a5%d5%b2%d5%a1%d5%a3%d5%ab%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a4%d5%a1%d5%bd%d5%bf%d5%ab%d5%a1%d6%80%d5%a1%d5%af%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b4%d5%ab%d5%bb%d5%b8%d6%81.pdf
3. http://publishing.ysu.am/files/Sovoroghi_Inqnuruynutyan_ev_masnagitakan_inqnoroshman_hogebanakan_gnahatum.pdf
4. https://editprint.am/students-data/%D4%B1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.pdf
5. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf